1
ՄԱՐՏԻ
2022

Luys Lnyu®

ԴԵՄՈԳՐԱՖԻԱԿԱՆ ԻՐԱՎԻՃԱԿԸ ԵՎ ԱՐՏԱԳԱՂԹԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ. ՄՇՈՒՇՈՏ ԱՊԱԳԱ

ԴԵՄՈԳՐԱՖԻԱԿԱՆ ԻՐԱՎԻՃԱԿԸ ԵՎ ԱՐՏԱԳԱՂԹԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ. ՄՇՈՒՇՈՏ ԱՊԱԳԱ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Հապավումներ 1

Ներածություն.....2

Ժողովրդագրական իրավիճակը Հայաստանում իշխանափոխությունից հետո 4

1. ՀՀ մշտական բնակչությունը 5

2. Ուրբանիզացիա 6

3. ՀՀ բնակչության բնական շարժը 8

3.1. Ծնվածները և ծնելիության մակարդակը 8

3.2. Մահերը 11

3.3. Բնական աճը 13

3.4. Ամուսնությունները և ամուսնալուծությունները.....13

3.5. Բնակչության ծերացումը.....14

Արտագաղթի միտումները Հայաստանում իշխանափոխությունից հետո 17

4. Արտագաղթի պատճառները. 18

5. Արտագաղթի տեմպերը և ուղղությունները.....19

6. Արտագաղթի կանխումը և հայրենադարձությունը..... 24

Ժողովրդագրական խնդիրների և արտագաղթի հնարավոր ազդեցությունը ՀՀ տնտեսության վրա..... 29

Եզրակացություն 31

ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐ

ԱՄՀ	Արժույթի միջազգային հիմնադրամ
ԱՄՆ	Ամերիկայի Միացյալ Նահանգներ
ՀՀ	Հայաստանի Հանրապետություն
ՀՆԱ	համախառն ներքին արդյունք
ՄԱԿ	Միավորված ազգերի կազմակերպություն
ՌԴ	Ռուսաստանի Դաշնություն
ՌԴ ՆԳՆ	Ռուսաստանի Դաշնության ներքին գործերի նախարարություն
ՏՀԶԿ	Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպություն
ՏՏԿԱՀ	Տնային տնտեսությունների կենսապայմանների ամբողջացված հետազոտություն
ՎԿ	ՀՀ վիճակագրական կոմիտե

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

«Մինչև 2050 թվականը Հայաստանի բնակչությունը հասցնենք առնվազն 5 միլիոնի»[1]: Այս դրույթը 2018 թվականի իշխանափոխությունից հետո հռչակվեց ՀՀ նոր իշխանությունների կողմից՝ որպես երկրի հետագա զարգացման հիմնական շարժիչ ուժերից մեկը: Սակայն, ի՞նչ արվեց այն կյանքի կոչելու համար:

Ժողովրդագրական խնդիրները ժամանակակից աշխարհի անբաժան մասն են, սակայն, եթե ցածր ծնելիությունը, բնակչության ծերացումը, անօրինական միգրացիան և ուրբանիզացիան կարող են հատկանշական լինել նաև զարգացած երկրների համար, ապա ապաբնակեցումը, արտագաղթը, հատկապես «ուղեղների արտահոսքը», մահացության բարձր մակարդակը, կյանքի ցածր տևողությունը հիմնականում զարգացող երկրներին բնորոշ հիմնախնդիրներն են:

Հայաստանի Հանրապետությունը վերոհիշյալ խնդիրների մեծամասնության հետ առերեսվել է անկախությունից ի վեր: Սակայն ամենավտանգավորը, մեր կարծիքով, վերջին ժամանակներում ահագնացող տեմպեր ստացած արտագաղթը և մահերի քանակն են, որոնք զուգորդվում են ծնունդների նվազմամբ:

Իշխանափոխությունից հետո ՀՀ նոր կառավարությունը երկրի բնակչության կտրուկ աճը՝ արտագաղթի տեմպերի էական նվազեցման և հայրենադարձության ճանապարհով հռչակեց ՀՀ զարգացման, այդ թվում՝ տնտեսական զարգացման, հիմնական գործոններից մեկը:

Վերոհիշյալ խնդիրների լուծմանն ուղղված ծրագրային մոտեցումներն իրենց արտահայտությունն են գտել 2018 թվականի արտահերթ խորհրդարանական ընտրություններին ներկայացված «Իմ քայլը» դաշինքի նախընտրական ծրագրում, 2019 թվականի փետրվարի 8-ի թիվ 65-Ա որոշմամբ[2] ընդունված «Հայաստանի Հանրապետության կառավարության ծրագրի մասին», ինչպես նաև «Հայաստան - 2050» ռազմավարական փաստաթղթում:

---

[1] Հայաստանի վերափոխման ռազմավարություն 2050, https://www.primeminister.am/u_files/file/Haytararutyunner/Armenia2050_7_5.pdf

[2] «Հայաստանի Հանրապետության կառավարության ծրագրի մասին» ՀՀ կառավարության 2019 թվականի փետրվարի 8-ի թիվ 65-Ա որոշում, https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=128281

2021 թվականի արտահերթ ընտրություններից հետո ՀՀ կառավարությունը ներկայացրեց 2021-2026թթ. ծրագիրը[3], որտեղ նույնպես առկա են վերոհիշյալ խնդիրներին վերաբերող դրույթներ:

Վերլուծությունը կատարվել է հետևյալ տրամաբանությամբ և կառուցվածքով.

- ✓ Նախ ներկայացվել են Հայաստանի ժողովրդագրական իրավիճակը և արտագաղթի միտումները բնութագրող վիճակագրական ցուցանիշները, դրանց հաշվարկման մեթոդաբանական առանձնահատկությունները, ինչպես նաև տարբեր ցուցանիշների փոփոխությունների որակը և պատճառները՝ նախաիշխանափոխական և հետիշխանափոխական ժամանակահատվածների համեմատության կտրվածքով:
- ✓ Նկարագրվել են ժողովրդագրական իրավիճակի բարելավմանն ու արտագաղթի տեմպերի նվազմանն ուղղված քաղաքականությունների և գործողությունների ուղղությունները և այդ տեսանկյունից վերլուծվել են իշխանափոխությունից հետո նշված ոլորտներում ՀՀ նոր կառավարության խոստումները, դրանց իրականացման իրատեսականությունը և այդ ուղղությամբ կատարված քայլերն ու արդյունքները: Այս համատեքստում ուսումնասիրվել են ՀՀ նոր կառավարության ծրագրերը, այդ թվում՝ 2021-2026թթ. ծրագիրը, «Իմ քայլը» դաշինքի նախընտրական ծրագիրը և «Հայաստան - 2050» ռազմավարական փաստաթուղթը:
- ✓ Առանձին անդրադարձ է կատարվել նաև ՀՀ տնտեսության վրա ժողովրդագրական խնդիրների և արտագաղթի ազդեցության ուղղությունների վերլուծմանը:
- ✓ Վերջում ամփոփվել են վերլուծության արդյունքները և կատարվել համապատասխան եզրակացություններ:

[3] ՀՀ կառավարության 2021 թվականի օգոստոսի 18-ի թիվ 1363-Ա որոշում, https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=155328

ԺՈՂՈՎՐԴԱԳՐԱԿԱՆ ԻՐԱՎԻՃԱԿԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ԻՇԽԱՆԱՓՈԽՈՒԹՅՈՒՆԻՑ ՀԵՏՈ

Հայաստանի Հանրապետությունն անկախությունից ի վեր առերեսվել է ժողովրդագրական խնդիրների, որոնք հիմնականում արտահայտվել են արտագաղթի, ծնելիության մակարդակի նվազման, բնակչության ծերացման, գյուղական բնակչության կտրուկ նվազման տեսքով: Սակայն իշխանափոխությունից հետո բնակչության լայն շրջանակներում պատրանք ստեղծվեց առ այն, որ նոր իշխանությունը կբարելավի իրավիճակը:

Հարկ է նշել, որ միջազգային պրակտիկայում ընդունված է ժողովրդագրական քաղաքականությունը իրականացնել երեք հիմնական ուղղություններով՝ տնտեսական, վարչաիրավական և կրթական-քարոզչական:

Տնտեսական միջոցներից են՝ տարբեր նպաստներ երեխայի ծննդյան կապակցությամբ, վճարովի արձակուրդներ, արտոնյալ վարկեր, հարկային և բնակարանային արտոնություններ՝ ծնելիության բարձրացման նպատակով, նպաստներ բազմազավակ ընտանիքների համար, անզավակության համար ուղղակի կամ անուղղակի հարկի ներդրում և այլն:

Վարչաիրավական ուղղությունը ենթադրում է օրենսդրական փոփոխություններ աբորտի և հակաբեղմնավորման միջոցների նկատմամբ վերաբերմունքի, ամուսնալուծության դեպքում մոր և երեխաների գույքային վիճակի և աշխատող կանանց, երիտասարդ ընտանիքների աշխատանքային պայմանների և իրավունքների իրացման լրացուցիչ մեխանիզմների ստեղծման, բարելավման մասով:

Կրթական և քարոզչական ուղղությունը ենթադրում է հասարակական կարծիքի ձևավորում, ժողովրդագրական վարքագծի նորմերի և չափորոշիչների, ավանդույթների, սովորույթների նկատմամբ վերաբերմունքի որոշում և այլն:

Աշխատանքի այս մասում կներկայացվեն ժողովրդագրական իրավիճակը նկարագրող վերջին տարիների վիճակագրական տվյալները, կոնկրետ ցուցանիշի հետ կապված խնդիրները, այդ խնդիրների լուծման միջազգային լավագույն փորձը, ինչպես նաև այդ ուղղությամբ ՀՀ կառավարության տված շռայլ խոստումները, գործնականում իրականացված քայլերը և արդյունքները:

1. ՀՀ ՄՇՏԱԿԱՆ ԲՆԱԿՉՈՒԹՅՈՒՆԸ

Մինչև 2050 թվականը Հայաստանի բնակչությունը հասցնենք առնվազն 5 միլիոնի[4]:

Երեք և ավելի զավակ ունեցող ընտանիքները դարձնենք համատարած՝ ապահովելով երեխաների բազմակողմանի զարգացման համար անհրաժեշտ պայմաններ, ինչպես նաև բազմազավակ կանանց և տղամարդկանց աշխատելու և զարգանալու համար հավասար նպաստավոր պայմաններ[5]:

Աղյուսակ 1. ՀՀ մշտական բնակչության թվաքանակը[6] 2015-2021թթ., տարեվերջին 1000 մարդ[7]

	2015	2016	2017	2018	2019	2020	2021[8]
Ամբողջ բնակչությունը	**2998.6**	**2986.1**	**2972.7**	**2965.3**	**2959.7**	**2963.3**	**2961.0**
տղամարդ	1429.1	1418.8	1408.2	1401.8	1397.0	1398.1	-
կին	1569.5	1567.3	1564.5	1563.5	1562.7	1565.2	-
Քաղաքային	**1907.0**	**1901.4**	**1895.8**	**1894.9**	**1892.1**	**1895.6**	**1891.9**
տղամարդ	889.1	884.1	878.9	877.3	874.9	876.1	-
կին	1 017.9	1 017.3	1 016.9	1 017.6	1017.2	1 019.5	-
Գյուղական	**1091.6**	**1084.7**	**1076.9**	**1070.4**	**1067.6**	**1067.7**	**1069.1**
տղամարդ	540.0	534.7	529.3	524.5	522.1	522.0	-
կին	551.6	550.0	547.6	545.9	545.5	545.7	-

Աղբյուր՝ ՀՀ վիճակագրական կոմիտե (ՎԿ)

Աղյուսակի տվյալներով 2021թ. տարեվերջի դրությամբ ՀՀ մշտական բնակչության թվաքանակը կազմել է 2961.0 հազ. մարդ և 2018թ. տարեսկզբի **համեմատ նվազել է շուրջ 12000 մարդով:**

[4] Հայաստանի վերափոխման ռազմավարություն 2050, https://www.primeminister.am/u_files/file/Haytararutyunner/Armenia2050_7_5.pdf

[5] Հայաստանի վերափոխման ռազմավարություն 2050, https://www.primeminister.am/u_files/file/Haytararutyunner/Armenia2050_7_5.pdf

[6] Համաձայն ՀՀ վիճակագրական կոմիտեի՝ բնակչության թվաքանակի վերաբերյալ տեղեկատվության ստացման սկզբնաղբյուրը մարդահամարներն են, որոնք ճշգրտվում են միգրացիայի սալդոյով:

[7] Հայաստանը թվերով 2021, https://armstat.am/am/?nid=82&id=2434

[8] 2021թ. տվյալները դեռևս ամբողջությամբ հրապարակված չեն. https://armstat.am/file/article/sv_12_21a_520_.pdf

2020թ. տվյալներով ՀՀ մշտական բնակչության կառուցվածքում 47.2%-ը կազմել են տղամարդիկ, իսկ 52.8%-ը՝ կանայք, իսկ 2018թ. տարեսկզբին այս ցուցանիշը կազմել է համապատասխանաբար 47.4% և 52.6%:

Հարկ է նշել նաև, որ համաձայն ՀՀ ՎԿ՝ մշտական բնակչությունը[9] տվյալ տարածքում մշտապես բնակվող ու հաշվառման պահին ներկա և ժամանակավոր բացակայող[10] բնակչության թվաքանակի ցուցանիշն է: Այսինքն՝ մշտական բնակչության կազմում հաշվարկվում են նաև արտագնա աշխատանքների մեկնած քաղաքացիները:

2. ՈՒՐԲԱՆԻԶԱՑԻԱ

2022թ. տարեսկզբին քաղաքային բնակչության մասնաբաժինը կազմել է 63.9%, իսկ գյուղականը՝ 36.1%: Այս ցուցանիշը 2018թ. տարեսկզբին կազմել է համապատասխանաբար 63.8% և 36.2%:

Աղյուսակ 2. ՀՀ բնակչությունը՝ ըստ մարզերի, 2015-2022թթ., տարեսկիզբ, հազ. մարդ

Մարզ	2015	2016	2017	2018	2019	2020	2021	2022
Հայաստան	**3010.6**	**2998.6**	**2986.1**	**2972.7**	**2965.3**	**2959.7**	**2963.3**	**2961.0**
ք. Երևան	1071.5	1073.7	1075.8	1077.6	1081.8	1084.0	1091.7	1092.7
Արագածոտն	131.3	129.8	128.5	127.1	125.4	124.7	124.5	124.7
Արարատ	260.1	258.9	258.4	257.8	256.7	256.6	256.6	256.6
Արմավիր	267.0	266.6	265.8	264.6	263.9	263.8	264.0	264.3
Գեղարքունիք	233.0	231.8	230.7	229.7	228.3	227.7	227.3	227.8
Լոռի	228.0	225.0	221.1	217.4	215.5	213.3	212.6	211.7
Կոտայք	255.0	253.9	252.8	251.6	251.6	250.9	251.2	251.0
Շիրակ	246.4	243.2	239.3	235.4	233.3	231.4	231.0	230.2
Սյունիք	140.2	139.4	138.9	138.4	137.6	137.3	135.8	134.7
Վայոց ձոր	51.4	50.8	50.3	49.6	49.0	48.5	48.1	47.6
Տավուշ	126.7	125.5	124.5	123.5	122.2	121.5	120.5	119.7

Աղբյուր՝ ՀՀ ՎԿ

[9] https://www.armstat.am/file/doc/99526823.pdf

[10] **Ժամանակավոր բացակա** բնակչություն են համարվում մարդահամարի պահին իրենց հիմնական (մշտական) բնակության վայրից մինչև մեկ տարի ժամկետով բացակայողները: Հաշվարկվում է համաձայն «2010թ. մարդահամարների և կացարանների հաշվառման Եվրոպայի վիճակագիրների կոնֆերանսի հանձնարարականներ» մշակված Եվրոստատի հետ համագործակցությամբ, ՄԱԿ-ի Եվրոպական տնտեսական հանձնաժողով, ՄԱԿ, Նյու Յորք և Ժնև, 2006:

2022թ. տարեսկզբի դրությամբ մշտական բնակչության 36.9 տոկոսը կենտրոնացված է եղել Երևան քաղաքում, իսկ ՀՀ Կոտայքի, Արարատի և Արմավիրի մարզերից յուրաքանչյուրում բնակվել է հանրապետության բնակչության 8.5%-8.9%-ը, ՀՀ Լոռու, Գեղարքունիքի և Շիրակի մարզերում, համապատասխանաբար՝ 7.1%-7.8%-ը, ՀՀ Տավուշի, Արագածոտնի և Սյունիքի մարզերից յուրաքանչյուրում՝ 4.0%-4.5%-ը, իսկ 1.6%-ը՝ ՀՀ Վայոց ձորի մարզում: Հարկ է նշել, որ 2018թ. տարեսկզբին Երևան քաղաքում բնակվել է բնակչության 36.2 տոկոսը, այսինքն՝ **Երևան քաղաքում կենտրոնացումը ավելի է մեծացել**:

Միաժամանակ, Հայաստանի համար հույժ կարևոր սահմանամերձ, իսկ ավելի ճիշտ սահմանապահ Տավուշի, Վայոց ձորի, Սյունիքի և Գեղարքունիքի մարզերի բնակչությունը **2018թ. համեմատ նվազել է համապատասխանաբար 3.8, 2, 3.7 և շուրջ 2 հազար մարդով:**

Աղյուսակ 3. ՀՀ քաղաքային բնակչությունը 2015-2022թթ., տարեսկիզբ, հազ. մարդ

	2015	2016	2017	2018	2019	2020	2021	2022
ՀՀ	**1912.9**	**1907.0**	**1901.4**	**1895.8**	**1894.9**	**1892.1**	**1895.6**	**1891.9**
ք. Երևան	1071.5	1073.7	1075.8	1077.6	1081.8	1084.0	1091.7	1092.7
Արագածոտն	29.9	29.1	28.3	27.6	27.0	26.8	26.6	26.6
Արարատ	74.0	73.1	72.7	72.4	72.2	72.1	72.0	72.0
Արմավիր	85.0	84.6	84.0	83.2	82.6	82.4	82.5	82.5
Գեղարքունիք	70.2	69.2	68.4	67.7	67.0	66.6	66.2	65.9
Լոռի	134.3	132.8	130.8	128.8	127.6	126.1	125.4	124.5
Կոտայք	138.5	137.9	137.5	137.1	137.4	136.8	136.8	136.9
Շիրակ	143.5	142.0	139.9	138.0	136.9	135.6	135.2	134.0
Սյունիք	94.4	94.0	93.9	93.8	93.4	93.2	91.8	90.6
Վայոց ձոր	18.1	17.7	17.6	17.4	17.3	17.1	16.8	16.3
Տավուշ	53.5	52.9	52.5	52.2	51.7	51.4	50.6	49.9

Աղբյուր՝ ՀՀ ՎԿ

Համաձայն տվյալների՝ ՀՀ գյուղական բնակչությունը շարունակել է նվազել ՀՀ բոլոր մարզերում, բացառությամբ Արմավիրի մարզի, որտեղ 2018թ. համեմատ գյուղական բնակչությունը աճել է 400 մարդով:

Ուրբանիզացիայի երևույթները Հայաստանում արտահայտվում են հիմնականում բնակչության՝ Երևան քաղաքում կենտրոնացմամբ, ինչը խոսում է նաև տարածքային անհամաչափ զարգացման մասին:

Աղյուսակ 4. ՀՀ գյուղական բնակչությունը 2015-2022թթ., տարեսկիզբ, հազ. մարդ

	2015	2016	2017	2018	2019	2020	2021	2022
ՀՀ	**1097.7**	**1091.6**	**1084.7**	**1076.9**	**1070.4**	**1067.6**	**1067.7**	**1069.1**
ք. Երևան	-	-	-	-	-	-	-	
Արագածոտն	101.4	100.7	100.2	99.5	98.4	97.9	97.9	98.1
Արարատ	186.1	185.8	185.7	185.4	184.5	184.5	184.6	184.6
Արմավիր	182.0	182.0	181.8	181.4	181.3	181.4	181.5	181.8
Գեղարքունիք	162.8	162.6	162.3	162.0	161.3	161.1	161.1	161.9
Լոռի	93.7	92.2	90.3	88.6	87.9	87.2	87.2	87.2
Կոտայք	116.5	116.0	115.3	114.5	114.2	114.1	114.4	114.1
Շիրակ	102.9	101.2	99.4	97.4	96.4	95.8	95.8	96.2
Սյունիք	45.8	45.4	45.0	44.6	44.2	44.1	44.0	44.1
Վայոց ձոր	33.3	33.1	32.7	32.2	31.7	31.4	31.3	31.3
Տավուշ	73.2	72.6	72.0	71.3	70.5	70.1	69.9	69.8

Աղբյուր՝ ՀՀ ՎԿ

3. ՀՀ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ԲՆԱԿԱՆ ՇԱՐԺԸ[11]

3.1. Ծնվածները և ծնելիության մակարդակը

Առկա ժողովրդագրական բացասական միտումները մեղմելուն է միտված լինելու ընտանիքի նոր քաղաքականության մշակումը: Մասնավորապես՝ ծնելիության մակարդակը բարձրացնելու համար մշակելու ենք երիտասարդ ընտանիքներին մատչելի բնակարանով ապահովելու նախագծեր[12]:

...Մշակվելու և կյանքի են կոչվելու ծնելիության խրախուսման, երիտասարդ և երեխաներ ունեցող ընտանիքների աջակցության նոր ծրագրեր, որոնց շրջանակներում, ըստ անհրաժեշտության, կվերանայվեն նաև գործող ծրագրերը[13]:

Կընդլայնվի մինչև 2 տարեկան երեխայի խնամքի նպաստի շահառուների շրջանակը՝ ի հաշիվ չաշխատող մայրերի՝ անկախ նրանց հաշվառման

[11]Համաձայն ՀՀ ՎԿ՝ ծնունդների, մահերի, ամուսնությունների և ամուսնալուծությունների մասին տեղեկությունները ստացվում են ՀՀ արդարադատության նախարարության քաղաքացիական կացության ակտերի ռեգիստրից՝ ծնունդների, մահերի, ամուսնությունների և ամուսնալուծությունների մասին կազմված ակտերում բովանդակվող տվյալների վիճակագրական մշակման հիման վրա:

[12] «Իմ քայլը» նախընտրական:

[13] «Հայաստանի Հանրապետության կառավարության ծրագրի մասին» ՀՀ կառավարության 2019 թվականի փետրվարի 8-ի թիվ 65-Ա որոշում, https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=128281

(բնակության) վայրից:

...Վերանայելու և զարգացնելու ենք արդեն մեկնարկած ժողովրդագրական իրավիճակի բարելավմանն ուղղված ծրագրերը՝ հատուկ ուշադրություն դարձնելով երեխաներ ունեցող ընտանիքների բնակապահովման միջոցառումներին, երեխաների խնամքի համար տրամադրվող նպաստներին:

...Մշակվելու է օրենքի նախագիծ՝ հստակ ամրագրելով ծնունդների խրախուսումներն ու բազմազավակ ընտանիքներին տրամադրվող սոցիալական երաշխիքները, այդ թվում՝ ընտանիքներին 3-րդ և հաջորդ երեխաների համար մինչև 6 տարեկանը ամսական 50,000 դրամ ֆինանսական աջակցություն տրամադրելու ձևով:

Իրականացվելու են գյուղաբնակ երիտասարդ և երեխա ունեցող ընտանիքներին աջակցելու, այդ թվում՝ եկամտաստեղծ գործունեությանը միտված պետական աջակցության թիրախային ծրագրեր[14]:

Աղյուսակ 5. ՀՀ բնակչության բնական շարժի հիմնական ցուցանիշները[15]

	Ընդամենը, մարդ							1 000 բնակչի հաշվով, պրոմիլ						
	2015	2016	2017	2018	2019	2020	2021	2015	2016	2017	2018	2019	2020	2021
Ծնվածներ	**41763**	**40592**	**37700**	**36574**	**36041**	**36353**	36585	**13.9**	**13.5**	**12.6**	**12.3**	**12.2**	**12.3**	**12.4**
Տղա	22133	21445	19731	19252	18913	19054	19064	15.4	15.1	14.0	13.7	13.5	13.6	13.6
Աղջիկ	19630	19147	17969	17322	17128	17299	17521	12.5	12.2	11.5	11.1	11.0	11.1	11.2
Մահացածներ	**27878**	**28226**	**27157**	**25751**	**26186**	**36170**	34658	**9.3**	**9.4**	**9.1**	**8.7**	**8.8**	**12.2**	**11.7**
Տղամարդ	14302	14536	13841	13021	13384	20031	17601	10.0	10.2	9.8	9.3	9.6	14.3	12.6
Կին	13576	13690	13316	12730	12802	16139	17057	8.6	8.7	8.5	8.1	8.2	10.3	10.9
Մահացածներ մինչև 1 տարեկան	**370**	**352**	**311**	**261**	**219**	**267**	**260**	**8.8**	**8.6**	**8.2**	**7.1**	**6.1**	**7.4**	**6.8**
Տղա	209	213	174	143	129	157	150	9.4	9.9	8.8	7.4	6.8	8.2	7.9
Աղջիկ	161	139	137	118	90	110	100	8.2	7.3	7.6	6.8	5.3	6.4	5.7
Բնական աճ	**13885**	**12366**	**10543**	**10823**	**9855**	**183**	**1927**	**4.6**	**4.1**	**3.5**	**3.6**	**3.4**	**0.1**	**0.7**
Ամուսնություն	**17603**	**16294**	**15214**	**14822**	**15529**	**12179**	**17165**	**5.9**	**5.5**	**5.1**	**5.0**	**5.3**	**4.1**	**5.8**
Ամուսնալուծություն	**3670**	**3648**	**3940**	**3820**	**4326**	**3155**	**4434**	**1.2**	**1.2**	**1.3**	**1.3**	**1.3**	**1.1**	**1.5**

Աղբյուր՝ ՀՀ ՎԿ

2020թ. ընթացքում, ըստ քաղաքացիական կացության գրանցումների, ՀՀ-ում արձանագրվել է 36.805 ծնունդ, որից 475-ը՝բազմապտուղ, նրանցից 470-ը՝ երկվորյակ, 5-ը՝ եռյակ: Ծնվածների ընդհանուր թվաքանակից՝ 36.353-ը

[14] Հայաստանի Հանրապետության կառավարության ծրագրի մասին» ՀՀ կառավարության 2021 թվականի օգոստոսի 18-ի թիվ 1363-Ա որոշում, https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=155328

[15] https://www.armstat.am/file/article/armenia_2021_3-demos.pdf

կազմել են կենդանի ծնվածները, իսկ 452-ը՝ մեռելածինները: 2021թ. տվյալներով արձանագրվել է 36.585 ծնունդ: Իսկ ծնելիության ընդհանուր գործակիցը, որը բնութագրում է հաշվետու ժամանակաշրջանում կենդանի ծնվածների թվաքանակը 1000 բնակչի հաշվով, 2021թ. կազմել է 12,4, որը 2017թ. արձանագրված ցուցանիշի համեմատ նվազել է 0,2 պրոմիլային կետով[16]:

Հարկ է նշել, որ ծնվածների թիվը, իշխանափոխությանը նախորդող տարիների համեմատ, բավականին նվազել է, ինչը կարող է հակասել այն պնդումներին, թե իշխանափոխությունից հետո բնակչությունը ավելի երջանիկ և ապագայի նկատմամբ ավելի լավատես է դարձել: Նույն եզրահանգմանն է բերում նաև ամուսնությունների և ամուսնալուծությունների թվաքանակի ուսումնասիրությունը:

Հատկանշական է, որ վերջին տարիներին արձանագրվել է 20-ից ցածր տարիքի կանանց ծնելիության տարիքային գործակցի նվազում, նախորդ տարվա համեմատ՝ 2,9, իսկ 2017թ.՝ 7,2 պրոմիլային կետով:

2020թ. ծնելիության գումարային գործակիցը, որը բնութագրում է երեխաների միջին թվաքանակը, որ կծնի մեկ կինն իր ծնունակ տարիքում իր ողջ կյանքի ընթացքում ծնելիության տվյալ տարվա մակարդակի պահպանման դեպքում, կազմել է 1,656 միավոր, բնակչության պարզ վերարտադրության (երբ ծնողներին փոխարինող երեխաների սերունդները հավասար են իրենց բացարձակ թվաքանակներով) համար անհրաժեշտ 2,150 միավորի համեմատ:

Ընդ որում, 2020թ. քաղաքային բնակչության ծնելիության գումարային գործակիցը կազմել է 1,839, իսկ գյուղականինը՝ 1,348 երեխա: Այս ցուցանիշը նույնպես մտահոգիչ է, քանի որ գյուղական բնակչության ծնելիության գործակիցը հիմնականում քաղաքայինից բարձր է լինում:

Ինչ վերաբերում է ծնելիության խթանման ծրագրերին և նպաստներին, ապա մեծ հաշվով էական փոփոխությունները եղել են հետևյալները.

- 2020թ. հուլիսի 1-ից երրորդ և հաջորդ երեխայի ծննդյան դեպքում երեխայի ծննդյան միանվագ նպաստը սկսել է վճարվել ամբողջությամբ (նախկինում 3-րդ և 4-րդ երեխայի ծննդյան դեպքում 500.000 դրամը վճարվում էր միանգամից, իսկ մնացած 500.000 դրամը փոխանցվում էր նոր ծնված երեխայի անվամբ բացված բանկային հաշվին՝ որպես ընտանեկան դրամագլուխ), իսկ առաջին և երկրորդ երեխայի ծնվելու դեպքում երեխայի

[16] https://www.armstat.am/file/article/demog_2021_3.pdf

ծննդյան միանվագ նպաստի չափը դարձել է 50 և 150 հազար դրամների փոխարեն 300 հազար դրամ:

- 2022թ. հունվարի 1-ից երրորդ և հաջորդ յուրաքանչյուր երեխայի ծննդյան դեպքում ամսական 50.000 աջակցություն է տրամադրվելու մինչև երեխայի 6 տարեկան դառնալը (նախկինում՝ մինչև 2 տարեկանը):

Միաժամանակ, չորս տարում ահռելի տնտեսական անկումների և սոցիալական ճախողումների ֆոնին[17] այս փոփոխությունները ՀՀ կառավարության կողմից համարվում են հեղափոխական և ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունը հպարտության առիթ է տեսնում մանիպուլյատիվ հայտարարելով, որ 2014 թվականից ի վեր ծնելիության պարբերաբար անկում գրանցող ցուցանիշն առաջին անգամ աճ է գրանցել 2020 թվականին[18]:

Հասկանալու համար ներկայացնենք ծնելիության ցուցանիշները վերջին տարիներին[19].

Աղյուսակ 6. Ծնելիության ցուցանիշները 2009-2021 թվականներին

Տարի	2009	2010	2011	2012	2013	2014	2015	2016	2017	2018	2019	2020	2021
Ծնելիության ընդհանուր գործակիցը	14.5	14.7	14.3	14.0	13.8	14.3	13.9	13.5	12.6	12.3	12.2	12.3	12.4

Աղբյուր՝ ՀՀ ՎԿ

Աղյուսակի տվյալները ցույց են տալիս, որ ծնելիության ցուցանիշը տատանվել է 13-14 պրոմիլի շուրջ, իսկ իշխանափոխությունից հետո 2019թ. նվազել մինչև շատ ցածր 12,2: Այդ նվազումից հետո ընդամենը 0,1 պրոմիլային կետի աճը ներկայացվում է, որպես աննախադեպ ձեռքբերում:

3.2. Մահերը

2020թ. ՀՀ-ում գրանցվել է 36.170 մահվան դեպք, **իսկ մահացության ընդհանուր գործակիցը 1000 բնակչի հաշվով կազմել է 12,2:** 2021թ. տվյալներով

[17] ՀՀ կառավարության սոցիալական քաղաքականության և բնակչության եկամուտների վերաբերյալ ավելի մանրամասն կարելի է ծանոթանալ նաև հետևյալ հղումներով. https://www.luys.am/img/artpic/small/37461a198e9175753a31incomes_report_final.pdf, https://www.luys.am/index.php?m=publicationsOne&pid=174

[18] ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն, 20.08.2021, https://www.mlsa.am/?p=29966, (այցելվել է 18.02.2022թ.)

[19] https://www.armstat.am/file/article/demog_2021_3.pdf

գրանցվել է 34.658 մահվան դեպք և **մահացության գործակիցը կազմել է 11,7:** Հարկ է նշել, որ **2020թ. և 2021թ. մահացության գործակիցները ամենաբարձրն են անկախ Հայաստանի պատմության ընթացքում** (ներառյալ՝ առաջին Արցախյան պատերազմի ժամանակաշրջանը 1991-1994թթ.) և անգամ ավելի բարձր է 1988թ. Սպիտակի կործանիչ երկրաշարժի տարվա ցուցանիշից: Եթե 2020թ. մահացության բարձր մակարդակը կարելի է բացատրել պատերազմով և համավարակով, ապա **2021թ. ցուցանիշը տարակուսելի է** (վերջին տարիների միջինից 8-9 հազարով ավելի)**, հատկապես հաշվի առնելով, որ համավարակից մահերը** (համավարակի դեմ պայքարի խայտառակ բացթողումների մասին բավական շատ հրապարակումներ են եղել) **այս թվի միայն մի մասն են կազմում: Այս փաստը նույնպես չի համապատասխանում այն պնդումներին, թե կյանքը ավելի բարեկեցիկ և երջանիկ է դարձել:**

2020թ. գրանցված մահվան ընդհանուր դեպքերից 20.031-ը կամ 55,4%-ը կազմել են տղամարդիկ, իսկ 16.139-ը կամ 44,6%-ը՝ կանայք: Տղամարդկանց և կանանց մահացության տարբեր մակարդակներով է պայմանավորված նաև տղամարդկանց և կանանց կյանքի սպասվող միջին տևողության ցուցանիշների տարբերությունը: 2020-ին տղամարդկանց կյանքի սպասվող միջին տևողությունը ծննդյան պահից կազմել է 68,4 տարի, իսկ կանանցը՝ 78,6 տարի: Քաղաքային բնակչության կազմում այդ ցուցանիշը տղամարդկանց համար կազմել է 67,2, կանանցը՝ 78,7 տարի, իսկ գյուղական բնակչության համար՝ համապատաս-խանաբար 70,0 և 78,5 տարի:

2020-ին կտրուկ աճել է մայրական մահացության գործակիցը՝ կազմելով 22 միավոր (2017թ.՝ 8): Հատկանշական է, որ շատ մեծ է եղել գյուղական բնակչության շրջանում գրանցված մայրական մահացությունը՝ 45,4 միավոր (2017՝ 15,3, 2018՝ 16,2, 2019՝ 32,4), ինչը կարող է պայմանավորված լինել գյուղական համայնքներում և մարզերում վերջին շրջանում բուժհաստատությունների համատարած լուծարմամբ:

Ինչպես նախորդող տարիներին, 2020թ. ևս մահացության կառուցվածքում գերակշռել են արյան շրջանառության համակարգի հետ կապված հիվանդություններից (47.3%) և չարորակ նորագոյացություններից (14.8%) մահվան դեպքերը, իսկ ԿՈՎԻԴ-19-ից մահերը կազմել են 9,8%:

2020թ. մանկական մահացության գործակիցը (կյանքի առաջին տարում), 1000 կենդանի ծնվածի հաշվով, կազմել է 7,4%:

Եվս մեկ ցուցանիշ չի համապատասխանում «երջանիկ քաղաքացու» վարկածին: Դա ՀՀ ՎԿ կողմից հրապարակվող Հայաստանի

ժողովրդագրական ժողովածուի «Հետաքրքրաշարժ վիճակագրություն»[20] մասում ներկայացված՝ ինքնասպանությունների և ինքնասպանությունների փորձերի քանակն է: Այսպես, եթե 2017թ. այդ ցուցանիշը կազմել է 562, ապա հետագա տարիներին այն աճել է և 2020թ. կազմել 663:

3.3. Բնական աճը

Բնական հավելաճը տարվա ընթացքում ծնվածների և մահացածների թվաքանակների տարբերությունն է:

Հանրապետությունում արձանագրված բնակչության բնական հավելաճի ցուցանիշը 2020թ. կազմել է՝ 183 մարդ, իսկ բնական **հավելաճի ընդհանուր գործակիցը՝ 0,1 պրոմիլ**, 1000 բնակչի հաշվով և նախորդ տարվա համեմատ նվազել է 3,3 պրոմիլային կետով: 2021թ. բնական հավելաճը կազմել է 1.927 մարդ, իսկ **հավելաճի գործակիցը՝ 0,7**: **Հարկ է նշել, որ 2017թ. բնական հավելաճը կազմել է շուրջ 10.600 մարդ, ինչպես նաև հավելաճի գործակիցը ՀՀ անկախությունից ի վեր չի նվազել 6,7-ից (2002թ.), իսկ վերջին տարիների միջինը տատանվել է 13-16 միջակայքում[21]:**

3.4. Ամուսնությունները և ամուսնալուծությունները

Ըստ քաղաքացիական կացության գրանցումների՝ 2020-ին Հայաստանում արձանագրվել է ամուսնությունների 12.179 դեպք, որը 21,7%-ով նվազել է 2019թ. ցուցանիշից, իսկ ամուսնալուծության դեպքերը կազմել են 3.155 և նվազել են 18,7%-ով: 2021թ. գրանցվել է 17.165 ամուսնություն և 4.434 ամուսնալուծություն: **Ամուսնության ցուցանիշները իշխանափոխությանը նախորդող տարիների համեմատ հիմնականում նվազել են** (բացառություն է կազմել միայն 2021 թվականը, տե՛ս Աղյուսակ 5), **իսկ ամուսնալուծությանը՝ մեծացել**, ինչը նույնպես չի կորելացվում բնակչության «ավելի երջանիկ և լավատես» դառնալու պնդումների հետ:

2020թ. տղամարդկանց ամուսնության միջին տարիքը կազմել է 31,6, իսկ կանանցը՝ 27,9 տարեկանը, իսկ առաջին ամուսնության միջին տարիքը՝ համապատասխանաբար 30,5 և 27,1 տարեկանը:

[20] https://www.armstat.am/file/article/demog_2021_9.pdf
[21] https://www.armstat.am/file/article/demog_2021_1.pdf

3.5 Բնակչության ծերացումը

Ժողովրդագրական իրավիճակի ամենակարևոր խնդիրներից է բնակչության ծերացումը, որը երկարատև ժողովրդագրական փոփոխությունների, բնակչության վերարտադրության, ծնելիության, մահացության և դրանց շարժերի, ինչպես նաև, արտագաղթի հետևանք է: Ըստ ՄԱԿ-ի կողմից սահմանված ժողովրդագրական ծերացման սանդղակի, եթե երկրի բնակչության կառուցվածքում 65 և բարձր տարիքի բնակչության մասնաբաժինը կազմում է 7%-ից ավելի, ապա տվյալ բնակչությունը համարվում է ծերացող[22]:

«Բնակչության ծերացման» գործընթացը չի շրջանցել նաև Հայաստանը: Այս ցուցանիշը 2021թ. տարեսկզբի դրությամբ ՀՀ-ում կազմել է 12.6%:

Աղյուսակ **7.** ՀՀ մշտական բնակչության բաշխումը ըստ տարիքային խմբերի, հազ. մարդ

Տարիքը, տարեկան	**2015**	**2016**	**2017**	**2018**	**2019**	**2020**	**2021**
0-4	209.9	208.5	207.9	203.4	198.3	191.1	185.8
5-9	199.5	204.8	207.6	209.9	210.7	209.6	208.3
10-14	173.2	175.5	180.3	186.3	191.1	198.8	204.3
15-19	190.5	179.7	170.9	165.2	165.2	167.7	172.2
20-24	254.6	233.0	211.6	195.9	183.8	174.3	167.0
25-29	276.6	276.9	273.4	264.6	251.9	235.6	218.4
30-34	250.0	255.8	260.1	262.7	263.4	262.4	265.7
35-39	201.4	207.8	215.1	222.4	230.7	239.1	247.2
40-44	175.8	177.2	179.3	181.3	185.2	191.8	200.1
45-49	176.7	170.3	165.8	165.3	164.3	165.4	169.0
50-54	221.5	207.6	194.4	182.0	172.0	162.9	159.5
55-59	207.0	215.0	219.1	217.3	212.4	204.9	193.6
60-64	150.8	158.1	164.8	171.7	183.2	191.0	199.3
65-69	95.7	107.5	115.2	122.1	128.1	136.3	142.7
70-74	67.3	56.7	55.9	61.8	71.3	82.2	92.1
75-79	88.1	88.2	85.4	77.5	66.0	55.4	45.7
80+	72.0	76.0	79.3	83.3	87.7	91.2	92.4
Ամբողջ բնակչությունը	**3010.6**	**2998.6**	**2986.1**	**2972.7**	**2965.3**	**2959.7**	**2963.3**
աշխատունակ տարիքից ցածր	*616.8*	*623.7*	*628.8*	*632.9*	*635.7*	*635.6*	*635.5*
աշխատունակ տարիքի	*2 015.1*	*1 987.2*	*1 962.9*	*1 934.6*	*1 910.4*	*1 889.5*	*1 881.8*
աշխատունակ տարիքից բարձր	*378.7*	*387.7*	*394.4*	*405.2*	*419.2*	*434.6*	*446.0*

Աղբյուր՝ ՀՀ ՎԿ

[22] World Population Ageing 2019, United Nations Department of Economic and Social Affairs https://www.un.org/en/development/desa/population/publications/pdf/ageing/WorldPopulationAgeing2019-Highlights.pdf

2021թ. հունվարի 1-ի դրությամբ ՀՀ մշտական բնակչության կառուցվածքում 0-15 տարեկան երեխաների տեսակարար կշիռը կազմել է 21,4%, աշխատունակ տարիքինը՝ 63,5% (շուրջ 1.88 մլն մարդ), իսկ աշխատունակ տարիքից բարձր բնակչության տեսակարար կշիռը՝ 15,1%: 2018թ. հունվարի 1-ի դրությամբ աշխատունակ տարիքի բնակչության տեսակարար կշիռը կազմել է 65,1% (շուրջ 1.93 մլն մարդ):

2021թ. տարեսկզբի դրությամբ աշխատունակ տարիքի ամեն 1000 մարդուն բաժին է ընկել 0-15 տարեկան և կենսաթոշակային տարիքի 575 մարդ՝ 2020թ. նույն ժամանակահատվածում արձանագրված 566 մարդու, իսկ 2018թ. տարեսկզբին՝ 537 մարդու համեմատ: Այսինքն՝ վերջին տարիներին դեմոգրաֆիական ծերացումը ավելի է խորացել:

Բնակչության միջին տարիքը 2021թ. տարեսկզբի դրությամբ կազմել է 37,0 տարի, տղամարդկանց համար՝ 34,9, իսկ կանանց համար՝ 38,9 տարի:

Բնակչության ծերացումը անմիջականորեն կապված է ոչ միայն ծնելիության մակարդակից, այլ նաև ավելի մեծ չափով՝ արտագաղթի տեմպերից: Հաջորդիվ կվերլուծենք վերջին տարիներին արտագաղթի տենդենցները:

Ամփոփելով ՀՀ ժողովրդագրական իրավիճակի վերլուծությունը՝ կարելի է փաստել, որ չնայած կառավարության խոստումներին, խնդիրները ավելի են սրվել: ՀՀ բնակչության թվաքանակը նվազել է և 2022թ. տարեսկզբին կազմում է ընդամենը 2 961 հազ. մարդ:

Մի փոքր ավելացել է քաղաքային բնակչության մասնաբաժինը, ավելացել է նաև Երևան քաղաքում բնակչության կենտրոնացումը՝ հասնելով շուրջ 37%-ի: ՀՀ գյուղական բնակչությունը շարունակել է նվազել ՀՀ բոլոր մարզերում, բացառությամբ Արմավիրի մարզի: Միաժամանակ, համապատասխանաբար 3,8, 2, 3,7 և շուրջ 2 հազար մարդով նվազել է Հայաստանի համար հույժ կարևոր սահմանամերձ Տավուշի, Վայոց ձորի, Սյունիքի և Գեղարքունիքի մարզերի բնակչությունը, ինչում, կարծում ենք, նշանակալի դեր կարող է ունենալ պետության կողմից տեղացի բնակչության անվտանգությունն ապահովելու ոչ բավարար մակարդակը:

Էականորեն նվազել են ծնունդները, ծնելիության գործակիցը իշխանափոխությունից հետո տատանվում է 12,2-12,4 պրոմիլի միջակայքում, ինչը ամենացածր ցուցանիշն է նախորդ տասնամյակների համեմատ: Հակառակ դրա՝ կտրուկ աճել է մահացությունը: 2020 և 2021թթ. գրանցվել է միջին հաշվով 35-36 հազար մահ, իսկ մահացության գործակիցը հասել է ռեկորդային 11-12 պրոմիլի: Հատկանշական է, որ աճել է նաև ինքնասպանությունների և

ամուսնալուծությունների թվաքանակը, իսկ ամուսնություններինը՝ հիմնականում նվազել է:

Արդյունքում, կտրուկ նվազել է բնական աճը, 2020 և 2021թթ. գրանցվել է աննախադեպ ցածր ցուցանիշ՝ ամբողջ երկրի բնակչության մասով ընդամենը 183 և 1927 մարդ համապատասխանաբար:

Խորացել է ժողովրդագրական ծերացման գործընթացը՝ աշխատունակ տարիքի բնակչության թվաքանակը 2018թ. համեմատ նվազել է շուրջ 53.000 մարդով:

Ընդհանուր առմամբ, ՀՀ կառավարությունը իրավիճակը շտկելու համար չի օգտագործել միջազգային պրակտիկայում ընդունված ամբողջ գործիքակազմը՝ հիմնականում եզրափակվելով միայն նոր ծնված երեխաների համար որոշ նպաստների ավելացմամբ:

Այսպիսով, վերոհիշյալ զարգացումները, ըստ էության, չեն համապատասխանում ոչ «երջանիկ քաղաքացու», ոչ էլ «հոգատար և արդյունավետ կառավարության» կերպարին:

ԱՐՏԱԳԱՂԹԻ ՄԻՏՈՒՄՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ԻՇԽԱՆԱՓՈԽՈՒԹՅՈՒՆԻՑ ՀԵՏՈ

Արտագաղթը անկախությունից հետո Հայաստանի Հանրապետության առաջ ծառացած ամենավտանգավոր խնդիրներից մեկն է, որը երկիրը կանգնեցրել է ապաբնակեցման մարտահրավերի առաջ: Այն տարիների ընթացքում կարող է բացասական ազդեցություն ունենալ ոչ միայն անվտանգային հարցերի, այլ նաև աշխատուժի, ընդհանուր առմամբ տնտեսության, ինչպես նաև ժողովրդագրական իրավիճակի վրա, օրինակ՝ բնակչության ծերացման կամ ամուսնությունների/ամուսնալուծությունների մասով:

Մյուս կողմից, որոշ հետազոտությունների համաձայն[23], ուժեղ կորելացիոն կապ կա ամուսնալուծությունների և Հայաստանից մեկնողների թվի միջև, ինչը նշանակում է, որ արտագաղթի ծավալի մեծացմանը զուգահեռ մեծանում է նաև ամուսնալուծությունների թիվը, ինչը, իր հերթին, ծնում է մի շարք նոր սոցիալական խնդիրներ:

Արտագաղթի հիմնական պատճառներից են՝ լավ աշխատանքի որոնումը, բարեկեցիկ միջավայրում ու պայմաններում ապրելու ձգտումը, ավելի լավ ապագա ունենալու հույսը և մի շարք այլ գործոններ:

Որոշ հետազոտողներ կարծում են, որ արտագաղթը աշխարհամակարգի վերակառուցման և դրա արդյունքում Հայաստանում ձևավորված կապիտալիզմի հետևանք է[24]: Իսկ Մասաչուսեթսի տեխնոլոգիական ինստիտուտի պրոֆեսոր Դարոն Աճեմօղլուն հայկական սփյուռքն է համարում Հայաստանի բնակչության համար երկիրն ավելի հեշտությամբ լքելու գործոն:

Այնուամենայնիվ, երկրորդ Արցախյան պատերազմից հետո արտագաղթի թե՛ պատճառները, թե՛ հետևանքները տեղափոխվեցին այլ, ավելի վտանգավոր հարթություն:

---

[23] Տ. Վարդանյան, Ամուսնալուծություններ և արտագաղթ կորելացիոն կապը, 24 դեկտեմբերի 2018, https://orbeli.am/hy/post/87/2018-12-24/%D5%84%D5%AB%D5%A3%D6%80%D5%A1%D6%81%D5%AB%D5%A1%D5%B5%D5%AB+%D5%BD%D5%B8%D6%81%D5%AB%D5%A1%D5%AC%D5%A1%D5%AF%D5%A1%D5%B6+%D5%BE%D5%BF%D5%A1%D5%B6%D5%A3%D5%A8 (18.02.2022)

[24] Ս. Մանուկյան, Միգրացիայի կառավարման գործոնները Հայաստանում, 16 դեկտեմբերի 2013, http://www.noravank.am/upload/pdf/2013_Migration_Control_Factors.pdf (18.02.2022թ.)

4. ԱՐՏԱԳԱՂԹԻ ՊԱՏՃԱՌՆԵՐԸ

Ուսումնասիրելով արտագաղթի պատճառները՝ հարկ է նշել, որ ինչպես և նմանատիպ խնդիրներ ունեցող այլ երկրներում, Հայաստանում նույնպես նախկինում արտագաղթի հիմնական պատճառներն են եղել լավ աշխատանք, բարեկեցիկ կյանք ունենալու հնարավորությունը, բարեկիրթ ու կարգուկանոն ունեցող երկրում ապրելու ցանկությունը, երեխաների համար ավելի լավ ապագայի ակնկալիքը[25]: Իսկապես, արտագաղթի բոլոր հիմնական ուղղությունների երկրներում՝ ՌԴ, ԱՄՆ, Արևմտյան Եվրոպա, կենսամակարդակը բավականին, իսկ որոշ դեպքերում՝ անհամեմատելի բարձր է, քան Հայաստանում, իսկ աշխատանք գտնելը՝ ավելի դյուրին: Արտագաղթը խրախուսող պատճառ դարձավ նաև ԵԱՏՄ շրջանակում ՀՀ քաղաքացիների համար աշխատանքային միգրացիայի պայմանների դյուրինացումը:

Սակայն վերջին տարիների զարգացումներից հետո վերոհիշյալ պատճառներին ավելացել և ավելի առաջնային են դարձել **մարդու կենսագործունեության ամենապարզ գործոնները՝ անձի և երկրի անվտանգությունը, երեխաներին պատերազմից և այլ արհավիրքներից զերծ պահելու ցանկությունը: Ավելացած նոր գործոնների շարքում թերևս հարկ է հիշատակել նաև ներհասարակական համերաշխության շեշտակի անկումը:**

Տարբեր հարցումներ և հետազոտություններ ցույց են տալիս, որ ներկայումս արտագաղթի հիմնական պատճառներից են անվտանգության խնդիրները՝ կապված պետության կողմից վերջինս ապահովելու անկարողության հետ, ինչպես նաև վախը կապված երեխաների բանակում ծառայելու հետ: Բազմաթիվ հարցումների ընթացքում, այդ թվում՝ օդանավակայաններում, քաղաքացիները նշում են, որ իրենց ընտանիքները Հայաստանում հեռանկար չունեն՝ **հաշվի առնելով երկրում տիրող քաղաքական և անվտանգության իրավիճակը**, հեռանում են երկրից, **որովհետև երեխաների ապագան վտանգված է**[26], պատերազմը Լեռնային Ղարաբաղում մեծապես ազդել է իրենց որոշումների վրա,

---

[25] Ս. Մանուկյան, Հայաստանի Հանրապետությունում կյանքի որակի հետազոտություն, 2016, https://www.gov.am/u_files/file/documents/IPSC_Q%D6%85LI%207-16_Final%20Report_05_05_2017_Website.pdf

[26] А. Меджлумян, В Армении наблюдается резкий рост оттока населения, 09.11.2021, https://russian.eurasianet.org/%D0%B2-%D0%B0%D1%80%D0%BC%D0%B5%D0%BD%D0%B8%D0%B8-%D0%BD%D0%B0%D0%B1%D0%BB%D1%8E%D0%B4%D0%B0%D0%B5%D1%82%D1%81%D1%8F-%D1%80%D0%B5%D0%B7%D0%BA%D0%B8%D0%B9-%D1%80%D0%BE%D1%81%D1%82-%D0%BE%D1%82%D1%82%D0%BE%D0%BA%D0%B0-%D0%BD%D0%B0%D1%81%D0%B5%D0%BB%D0%B5%D0%BD%D0%B8%D1%8F (18.02.2022)

ինչպես նաև այն հանգամանքը, որ Հայաստանում **ապրելու պայմաններ առկա են հիմնականում Երևանում**:

Վերլուծաբանների կարծիքով երկրի տնտեսական վիճակը մնում է բնակչության արտագաղթի հիմնական պատճառներից մեկը, սակայն **հետպատերազմյան մտահոգությունները և անվտանգության խնդիրները,** ինչպես նաև մտավախությունները, որ **երեխաները կզորակոչվեն բանակ,** նույնպես մեծ դեր են խաղում: Տնտեսական պատճառներից նշվում են **ԿՈՎԻԴ-19-ի հետ կապված ճգնաժամը, բարձր գնաճը** և այլն[27]:

Վերոհիշյալը զուգորդվում է **պետության կամ տարբեր կազմակերպությունների հանդեպ աճող անվստահությամբ,** որը արտահայտվում է նաև նրանով, որ հարցազրույց տվողներից շատերը **չեն ցանկանում խոսել կամ թաքցնում են իրենց իրական մտքերը արտագաղթի մասին**[28]:

Մասնագետները որպես վտանգավոր միտում նշում են նաև այն, որ **արտագաղթողների մի ստվար զանգված բարենպաստ պայմաններում ապրող, ոչ աղքատ քաղաքացիներն են**[29,30]**:**

5. ԱՐՏԱԳԱՂԹԻ ՏԵՄՊԵՐԸ ԵՎ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Հայաստանում արտագաղթը արտահայտող երկու ցուցանիշ է օգտագործվում՝ սահմանահատումների հաշվեկշիռը և միգրացիայի մնացորդը:

Սահմանահատումների հաշվեկշիռը Հայաստան ժամանած և Հայաստանից մեկնած մարդկանց տարբերությունն է (հաշվեկշիռը) որոշակի ժամանակահատվածում: 2010-ից Հայաստանի սահմանային անցակետերում

---

[27] Ա. Меджлумян, В Армении наблюдается резкий рост оттока населения, 09.11.2021, https://russian.eurasianet.org/%D0%B2-%D0%B0%D1%80%D0%BC%D0%B5%D0%BD%D0%B8%D0%B8-%D0%BD%D0%B0%D0%B1%D0%BB%D1%8E%D0%B4%D0%B0%D0%B5%D1%82%D1%81%D1%8F-%D1%80%D0%B5%D0%B7%D0%BA%D0%B8%D0%B9-%D1%80%D0%BE%D1%81%D1%82-%D0%BE%D1%82%D1%82%D0%BE%D0%BA%D0%B0-%D0%BD%D0%B0%D1%81%D0%B5%D0%BB%D0%B5%D0%BD%D0%B8%D1%8F (18.02.2022):

[28] Նույն տեղում:

[29] Ս. Գրիգորյան, Հայաստանից արտագաղթը մեծանում է, բնակչությունը՝ ծերանում, 27 հունվարի 2022թ., https://news.am/arm/news/683945.html (18.02.2022թ.):

[30] Մ. Պապյան, Կրկին արտագաղթ Հայաստանից. պատճառներն ու հնարավոր զարգացումները, 19 մարտի 2021թ., https://jam-news.net/am/%D5%AF%D6%80%D5%AF%D5%AB%D5%B6-%D5%A1%D6%80%D5%BF%D5%A1%D5%A3%D5%A1%D5%B2%D5%A9-%D5%B0%D5%A1%D5%B5%D5%A1%D5%BD%D5%BF%D5%A1%D5%B6%D5%AB%D6%81%E2%80%A4-%D5%BA%D5%A1%D5%BF%D5%B3%D5%A1%D5%BC%D5%B6%D5%A5/ (18.02.2022թ.):

ներդրվել է ՀՀ սահմանային էլեկտրոնային կառավարման տեղեկատվական (ՍԷԿՏ) համակարգը, որից սկսել է օգտվել ՀՀ ՎԿ-ն:

Մյուս ցուցանիշը՝ *միգրացիայի մնացորդը,* հաշվարկվում է գրանցվածների և գրանցումից դուրս եկածների՝ ՀՀ ոստիկանությունից ստացված տվյալների համաձայն և ճշգրտվում մարդահամարի արդյունքների հիման վրա: Հաշվի առնելով, որ քաղաքացիները կարող են իրենց բնակության վայրը փոխել առանց ոստիկանության անձնագրային և վիզաների վարչություն ներկայանալու, վիճակագրական կոմիտեն 2013-ից ճշգրտումներ անելու համար օգտվում է նաև տնային տնտեսությունների կենսապայմանների հետազոտության արդյունքներով ստացված միգրացիայի գնահատականներից: Ի դեպ, վիճակագրական կոմիտեի դիրքորոշմամբ, արտագաղթի (և ներգաղթի) իրական պատկերը արտահայտում է միգրացիայի մնացորդը[31]:

Գծապատկեր **1.** Սահմանահատումների հաշվեկշիռը Հայաստանում 1992-2021թթ.



Աղբյուր՝ ՀՀ ՎԿ

Սահմանահատումների հաշվեկշռի տվյալները ցույց են տալիս, որ անկախությունից ի վեր ՀՀ ժամանածների թիվը գերազանցել է մեկնածների թվին 2004-2006թթ., ինչը պայմանավորված է եղել տնտեսական աճի բարձր տեմպերով և 2018-2020թթ.: 2018-2019թթ. դրական հաշվեկշիռը կարող էր

[31] Հ. Նազարեթյան, Արտագաղթի թվերի նրբությունը, 18 հունվարի 2022թ. https://www.civilnet.am/news/646768/%D5%A1%D6%80%D5%BF%D5%A1%D5%A3%D5%A1%D5%B2%D5%A9%D5%AB-%D5%A9%D5%BE%D5%A5%D6%80%D5%AB-%D5%B6%D6%80%D5%A2%D5%B8%D6%82%D5%A9%D5%B5%D5%B8%D6%82%D5%B6%D5%A8/ (18.02.2022թ.):

պայմանավորված լինել որոշակի հատվածի մոտ դրական սպասումներով, իսկ 2020թ.՝ ամբողջությամբ ԿՈՎԻԴ-19-ի համավարակի ազդեցությունն է, երբ երկրից դուրս գալը դարձավ գործնականում անհնարին: **Ինչ վերաբերում է 2021-ին, ապա արձանագրվել է բացասական հաշվեկշիռ՝ -43.874 մարդ: Ի դեպ, Հայաստանի Հանրապետության փաստաթղթերով սահմանահատումների հաշվեկշիռը ավելի բացասական է՝ -73.571 մարդ[32]:**

Հայաստանի երկու օդանավակայաններում («Զվարթնոց» և «Շիրակ») ուղևորահոսքը 2021 թվականին կազմել է 2 մլն 381 հազար 680 մարդ. հունվարին ուղևորահոսքը՝ հաշվի առնելով այս երկու օդանավակայանների տվյալները, կազմել է 64.296 մարդ, փետրվարին՝ 90.198, մարտին՝ 116.481, ապրիլին՝ 134.130, մայիսին՝ 166.353, հունիսին՝ 200.534, հուլիսին՝ 300.951, օգոստոսին՝ 350.765, սեպտեմբերին՝ 281.270, հոկտեմբերին՝ 247.140, նոյեմբերին՝ 208.682, դեկտեմբերին՝ 220.880 մարդ[33]:

2021 հունվար-դեկտեմբեր ամիսների ընթացքում ժամանած քաղաքացիների թիվը կազմել է 1.176.515, իսկ մեկնածներինը՝ 1.223.838 մարդ: **Արդյունքում, օդային ճանապարհով մեկնած քաղաքացիների թիվը 47.323-ով շատ է ժամանածների թվից, այսինքն՝ հաշվեկշիռը բացասական է[34]:**

Միգրացիայի մնացորդի ցուցանիշի (տե՛ս Գծապատկեր 2) ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ անկախությունից ի վեր մնացորդը դրական է եղել միայն 2020թ. (+3.400), որը, ինչպես արդեն նշել էինք, ամբողջությամբ պայմանավորված է համավարակի ընթացքում ՀՀ-ից դուրս գալու կամ այլ երկրներ (հատկապես ՌԴ՝ սեզոնային աշխատանքների համար) մուտք գործելու սահմանափակումներով: **Իսկ արդեն 2021թ. արդյունքներով միգրացիայի մնացորդը կրկին բացասական է՝ -4.200 մարդ: Ե՛վ սահմանահատումների, և՛ միգրացիայի մնացորդի տվյալները ցույց են տալիս, որ արտագաղթի հետ կապված իրավիճակը ավելի է սրվել:**

[32] https://armstat.am/file/article/sv_12_21a_520_.pdf

[33] Հայաստանի երկու օդանավակայաններում ուղեւորահոսքի ցուցանիշը ողջ 2021 թվականին, 13 հունվար 2022թ., https://news.am/arm/news/681856.html (18.02.2022թ.)

[34] Քանի՞ մարդ է 2021 թվականին օդային ճանապարհով լքել Հայաստանը, 22 հունվար 2022թ., https://news.am/arm/news/683195.html (18.02.2022թ.)

Գծապատկեր **2.** Միգրացիայի մնացորդը Հայաստանում 1992-2021թթ.[35]



Աղբյուր՝ ՀՀ ՎԿ

Միգրացիոն հարցերով վերլուծաբանների ուսումնասիրությունների համաձայն՝ արտագաղթի տեմպերը ավելի մեծ կլինեին, եթե չլինեին ԿՈՎԻԴ-19-ի համավարակով պայմանավորված մարդկանց տեղաշարժի սահմանափակումները: Այսինքն, ըստ մասնագետների, մշտական բնակության նպատակով արտագաղթողների հոսքը սառեցված է, և դա պայմանավորված է արտաքին գործոններով, այլ ոչ թե Հայաստանում տիրող իրավիճակով[36]:

[35] https://www.armstat.am/am/?nid=82&id=2446

[36] Մ. Պապյան, Կրկին արտագաղթ Հայաստանից. պատճառներն ու հնարավոր զարգացումները, 19 մարտի 2021թ., https://jam-news.net/am/%D5%AF%D6%80%D5%AF%D5%AB%D5%B6-%D5%A1%D6%80%D5%BF%D5%A1%D5%A3%D5%A1%D5%B2%D5%A9-%D5%B0%D5%A1%D5%B5%D5%A1%D5%BD%D5%BF%D5%A1%D5%B6%D5%AB%D6%81%E2%80%A4-%D5%BA%D5%A1%D5%BF%D5%B3%D5%A1%D5%BC%D5%B6%D5%A5/ (18.02.2022թ.):

Աղյուսակ **8.** ՌԴ միգրացիոն հոսքերում ընդգրկված ՀՀ քաղաքացիները 2016-2021թթ.[37]

Տարի	Հաշվառված են որպես միգրանտ	Միգրացիոն հաշվառում						Ստացել են ժամանակավոր բնակվելու թույլտվություն	Ստացել են կացության իրավունք	Ստացել են ՌԴ քաղաքացիություն
		այդ թվում՝								
		առաջին անգամ	որոնցից ըստ այցելության նպատակի՝							
			զբոսաշրջություն	ուսում	աշխատանք	անձնական	այլ			
2016	631,746	337,967	8,068	8,786	209,887	99,251	11,975	21,872	18,352	22,264
2017	657,648	350,770	7,283	8,321	232,247	89,657	13,262	22,860	13,320	25,144
2018	641,618	324,656	6,867	9,801	207,945	87,459	12,584	19,526	12,058	27,134
2019	634,336	331,115	11,724	13,311	210,460	82,753	12,867	16,632	11,856	24,024
2020	364,581	116,553	3,101	4,004	69,024	32,976	7,448	8,490	18,291	30,538
2021	578,779	-	5,578	16,112	389,809	106974	16,378	11,720	23,511	46,931

Աղբյուր՝ ՌԴ ՆԳՆ միգրացիայի հարցերով գլխավոր վարչություն

ՀՀ բնակչության արտագաղթի տեմպերը ներկայացնող մեկ այլ հետաքրքիր ցուցանիշ է ՌԴ ՆԳՆ միգրացիայի հարցերով գլխավոր վարչության կողմից հրապարակվող, այդ թվում՝ ՀՀ քաղաքացիների, ՌԴ-ում միգրացիոն շարժի վերաբերյալ տեղեկատվությունը: Հանձայն դրա՝ **իշխանափոխությունից հետո Հայաստանից ՌԴ արտագաղթողների թիվը ոչ միայն չի նվազել, այլև որոշ դեպքերում ռեկորդային ցուցանիշներ է գրանցել:** Այսպես, 2021թ. ՌԴ կացության իրավունք է ստացել ավելի քան 23.500 ՀՀ քաղաքացի, **իսկ ՌԴ քաղաքացիություն է ստացել ավելի քան 46.900 ՀՀ նախկին քաղաքացի: 2018-2021թթ. ընթացքում ՌԴ քաղաքացիություն է ստացել ավելի քան 128.000 հայաստանցի,** ինչը նույնպես չի կորելացվում հայտարարված համընդհանուր երջանկության և լավատեսության հետ: Ինչպես նշել ենք, 2020թ. ցուցանիշները հաշվի չեն առնվում համավարակով պայմանավորված ՌԴ մուտք գործելու սահմանափակումների պատճառով:

Նույն միտումները արձանագրվել են նաև ՀՀ ՎԿ կողմից: Այսպես, 2019թ. տնային տնտեսությունների կենսապայմանների ամբողջացված հետազոտության արդյունքների համաձայն, մեկնած (արտագաղթած) միգրանտների մեծամասնությունը մեկնել է Ռուսաստանի Դաշնության քաղաքային վայրեր: Դա համընկնում է այն փաստի հետ, որ վերադարձածների մեծամասնությունը ՌԴ քաղաքային վայրերից վերադարձած տղամարդիկ են եղել: Մեկնումների ծավալներն առավել ընդգծած են եղել տարեսկզբին՝ հունվար-ապրիլ ամիսներին,

[37] Сводка основных показателей деятельности по миграционной ситуации в Российской Федерации за январь - декабрь 2021 года, 25.01.2022, https://xn--b1aew.xn--p1ai/dejatelnost/statistics/migracionnaya/item/28104434/ (18.02.2022թ.).

իսկ վերադարձած միգրանտներինը՝ տարեվերջին, հոկտեմբերից դեկտեմբեր ժամանակահատվածում: Նոր ժամանած միգրանտների շրջանում մեծամասնություն են կազմել կանայք, ովքեր հիմնականում ժամանել են Գեղարքունիքի, Լոռու և Արմավիրի մարզերի ինչպես քաղաքային, այնպես էլ գյուղական վայրեր: Նոր ժամանած միգրանտների շարժը համեմատաբար ավելի բարձր ինտենսիվություն է արձանագրել հուլիս, սեպտեմբեր և դեկտեմբեր ամիսներին:

Ընդհանուր առմամբ, մեկնածների ավելի քան 69.2%-ն աշխատել է շինարարության ոլորտում: Միգրանտները զբաղված են եղել նաև տնտեսական գործունեության այլ ոլորտներում, այդ թվում՝ մշակող արդյունաբերության, մեծածախ և մանրածախ առևտրի, ավտոմեքենաների և մոտոցիկլների նորոգման, փոխադրումների և պահեստային տնտեսության, վարչարարական և օժանդակ գործունեության ոլորտներում[38]:

Իհարկե, Հայաստանի բնակիչների արտագաղթի աշխարհագրությունը չի սահմանափակվում ՌԴ-ով (հիմնական ուղղություններից են նաև ԱՄՆ-ը, Արևմտյան Եվրոպան և այլն), սակայն ներկայումս հետաքրքիր ուղղություններից միայն այդ երկրում է հնարավոր համեմատաբար ավելի հեշտ կեցության և աշխատանքի օրինական իրավունք ստանալ, քան արևմտյան երկրներում: Մյուս կողմից, ավելի քիչ է լեզվական արգելքը, առկա է կենցաղի և կյանքի նմանություն՝ հաշվի առնելով ընդհանուր խորհրդային անցյալը:

6. ԱՐՏԱԳԱՂԹԻ ԿԱՆԽՈՒՄԸ ԵՎ ՀԱՅՐԵՆԱԴԱՐՁՈՒԹՅՈՒՆԸ

Կառավարությունը կարևորում է միգրանտների, այդ թվում՝ վերադարձող միգրանտների տնտեսական և մարդկային ներուժի ուղղորդումը երկրի զարգացման գործին: Հայաստանի Հանրապետության միգրացիայի պետական կառավարման հայեցակարգով նախատեսված՝ ...հայրենադարձության խթանմանն ուղղված գործողությունների կատարման ապահովում...:[39]

Մշակելու ենք հայրենադարձության կազմակերպման ծրագրեր, որ հիմնականում միտված են լինելու վերջին տասնամյակներին Հայաստանից արտագաղթած ՀՀ քաղաքացիների բարեհաջող վերահաստատմանը հայրենիքում:[40]

Թիրախային ծրագրեր են մշակվելու նաև հայրենադարձ ընտանիքների համար՝

[38] https://armstat.am/file/article/migration_profile_arm__2019_2.pdf

[39] Հայաստանի Հանրապետության կառավարության ծրագրի մասին» ՀՀ կառավարության 2021 թվականի օգոստոսի 18-ի թիվ 1363-Ա որոշում, https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=155328

[40] «Իմ քայլը» դաշինքի նախընտրական ծրագիր:

առաջնահերթ դիտարկելով երիտասարդ և երեխաներ ունեցող ընտանիքներին:[41]

Թիրախային ծրագրեր են մշակվելու նաև հայրենադարձ ընտանիքների համար[42]*:*

ՀՀ նոր կառավարությունը բազմիցս հայտարարել է, այդ թվում՝ իր ծրագրերում, **որ կանխելու է արտագաղթը և ավելին՝ արտագաղթը վերափոխելու է ակտիվ հայրենադարձության:**

Այս նպատակներն իրագործելու համար կառավարությունը պետք է գործեր երկու հիմնական ուղղություններով՝ վերացներ կամ մեղմեր արտագաղթի պատճառները և խրախուսեր հայրենադարձությունը, այդ թվում՝ տարբեր ծրագրերի միջոցով:

Արտագաղթը խթանող պատճառները մեղմելու համար առաջին հերթին պետք է բարելավվեին բնակչության տնտեսական և սոցիալական պայմանները, այսինքն՝ քաղաքացիները ավելի լավ, բարեկեցիկ և անվտանգ կյանք ունենային:

Այս աշխատանքի շրջանակներում նպատակահարմար չենք համարում մանրամասն անդրադարձ կատարել վերջին տարիներին ՀՀ սոցիալական և տնտեսական զարգացումներին, քանի որ մի կողմից դա առանձին հետազոտության առարկա է, իսկ մյուս կողմից ակնհայտ է, որ վիճակը բարվոք չէ՝ տնտեսությունը չի վերականգնվել համավարակի ազդեցությունից, գների մակարդակը կտրուկ աճել է, թանկացել են կոմունալ ծառայությունները, սահմանամերձ շրջաններում աճել է անվտանգության խնդիրը և այլն:

Սույն ուսումնասիրության շրջանակում կներկայացնենք միայն մի քանի կարևոր ցուցանիշների զարգացման միտումները վերջին տարիներին: **Այսպես, 2018-2021թթ. ՀՆԱ միջին տարեկան աճը կազմել է շուրջ 3%, գների մակարդակը ընդհանուր առմամբ աճել է շուրջ 14%**[43] **(12-ամսյա գնաճ), միաժամանակ կենսաթոշակները բարձրացվել են ընդամենը 10%-ով, իսկ աղքատության մակարդակը 2020թ.**[44] **կազմել է 27%: Հարկ է նշել, որ**

---

[41] «Հայաստանի Հանրապետության կառավարության ծրագրի մասին» ՀՀ կառավարության 2019 թվականի փետրվարի 8-ի թիվ 65-Ա որոշում, https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=128281

[42] Հայաստանի Հանրապետության կառավարության ծրագրի մասին» ՀՀ կառավարության 2021 թվականի օգոստոսի 18-ի թիվ 1363-Ա որոշում, https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=155328

[43] https://www.minfin.am/hy/page/_hy_chart_/, 12-ամսյա գնաճը 2018-2021թթ. կազմել է համապատասխանաբար 1.8, 0.7, 3.7 և 7.7%:

[44] Աղքատության մակարդակի 2021թ. ցուցանիշները դեռևս հրապարակված չեն ՀՀ ՎԿ կողմից:

աղքատության մակարդակը վերջին տարիներին անընդհատ աճել է՝ 2018թ.՝ 23.5%-ով, 2019թ.՝ 26.4-ով[45]:

Ակնհայտ է, որ նման տնտեսական իրավիճակը, ինչպես նաև նոր ավելացած՝ անվտանգության հետ կապված խնդիրները չեն կարող հանդիսանալ արտագաղթի կանխման գործոն, հակառակը՝ դրանք արտագաղթը խթանող երևույթներ են:

Ինչ վերաբերում է հայրենադարձության խրախուսելուն, ապա պետք է փաստել, որ այս մասով նույնպես վիճակը վատթարացել է:

ՀՀ կառավարությունը խոստացել էր մշակել և իրականացնել հայրենադարձության կազմակերպման թիրախային ծրագրեր, ինչպես նաև ՀՀ միգրացիայի պետական կառավարման հայեցակարգով նախատեսված՝ հայրենադարձության խթանմանն ուղղված գործողություններ: Ցավոք, պետք է փաստել, որ հայրենադարձությունը խթանող համակարգային էական և թիրախային նախաձեռնություններ չեն իրականացվել:

Ինչ վերաբերում է Հայաստանի Հանրապետության միգրացիայի պետական կառավարման հայեցակարգով նախատեսված ծրագրերի իրականացմանը, ապա ՀՀ միգրացիոն ծառայության կայքում ներկայացված է միայն 2017-2021թթ. ծրագրի 2017թ.[46] կատարողականը և ծառայության 2018թ. տարեկան հաշվետվությունը[47]:

Մյուս կողմից, **վերջին զարգացումների պատճառով զգալիորեն նվազել է սփյուռքի հետաքրքրվածությունը Հայաստանով:** Դրա մասին է վկայում նաև Արամ Ա Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոսը. «Սփյուռքը սկսել է անտարբեր լինել ինքն իր նկատմամբ, հուսախաբ՝ Հայաստանի նկատմամբ, հատկապես, Արցախի պատերազմից հետո»: Արամ Ա–ի խոսքով՝ 2022-ը Սփյուռքի տարի է հռչակվել, քանի որ սփյուռքի մասին խոսելն այլևս սովորական երևույթ չէ, քանի որ սփյուռքը տագնապի մեջ է և վերակազմակերպվելու կարիք ունի[48]:

---

[45] Համաձայն ՀՀ ՎԿ՝ աղքատության մակարդակի 2019-20թթ. ցուցանիշները համադրելի չեն նախորդ տարիների ցուցանիշների հետ, քանի որ հաշվարկվել են ըստ աղքատության միջին գծի, իսկ նախորդ ժամանակաշրջաններում՝ ըստ ստորին գծի https://www.armstat.am/file/article/poverty_2021_a_1.pdf: Այնուամենայնիվ, աղքատության ստորին և միջին գծերի միջև տարբերությունը մեծ չէ:

[46] http://www.migration.am/ended-programs

[47] http://www.migration.am/reports

[48] Սփյուռքը տագնապի մեջ է. Արամ Ա–ն մանրամասնել է՝ ինչու է 2022-ը Սփյուռքի տարի հռչակել, 15.01.2022թ., https://armeniasputnik.am/20220115/spjurqy-tagnapi-mej-e-aram-an-manramasnel-e-inchu-e-2022-y-spjurqi-tari-hrchakel-37559711.html (18.02.2022թ.):

Ամփոփելով այս մասը՝ հարկ է նշել, որ արտագաղթը անկախ Հայաստանի ամենավտանգավոր խնդիրներից մեկն է: Արտագաղթի տեմպերը վերջին տարիներին ոչ միայն չեն նվազում, այլև ստանում են նոր, ավելի վտանգավոր միտումներ, մասնավորապես՝

- Հայաստանում արտագաղթն արտահայտող երկու ցուցանիշ է օգտագործվում՝ սահմանահատումների հաշվեկշիռը և միգրացիայի մնացորդը: Սահմանահատումների հաշվեկշռի տվյալների համաձայն՝ անկախությունից ի վեր ՀՀ ժամանածների թիվը գերազանցել է մեկնածների թվին միայն 2004-2006թթ. և 2018-2019թթ.: 2020թ. դրական հաշվեկշիռը ամբողջությամբ պայմանավորված է եղել ԿՈՎԻԴ-19-ի համավարակի սահմանափակումներով: Իսկ արդեն 2021թ. արձանագրվել է էական բացասական հաշվեկշիռ՝ -43.874 մարդ: Ի դեպ, Հայաստանի Հանրապետության փաստաթղթերով սահմանահատումների բացասական հաշվեկշիռը կազմել է -73.571 մարդ:

- Միգրացիայի մնացորդի ցուցանիշի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ վերջին տարիներին այն շարունակել է մնալ բացասական, դրական է եղել միայն 2020թ. (+3.400), իսկ արդեն 2021թ. արդյունքներով միգրացիայի մնացորդը կրկին բացասական է՝ -4.200 մարդ: Ե՛վ սահմանահատումների, և՛ միգրացիայի մնացորդի տվյալները ցույց են տալիս, որ արտագաղթի հետ կապված իրավիճակը ավելի է սրվել:

- Վերջին տարիներին ՀՀ բնակչության արտագաղթի տեմպերը բնութագրող բավական խոսուն ցուցանիշ է ՀՀ քաղաքացիների՝ ՌԴ-ում միգրացիոն շարժի վերաբերյալ տեղեկատվությունը: Իշխանափոխությունից հետո Հայաստանից ՌԴ արտագաղթողների թիվը որոշ դեպքերում ռեկորդային ցուցանիշներ է գրանցել. 2021թ. ՌԴ կացության իրավունք է ստացել ավելի քան 23.500 ՀՀ քաղաքացի, իսկ ՌԴ քաղաքացիություն է ստացել ավելի քան 46.900 մարդ: 2018-2021թթ. ընթացքում ՌԴ քաղաքացիություն է ստացել ավելի քան 128.000 հայաստանցի:

- Իրավիճակի վատթարացումը կարող է բացատրվել արտագաղթի պատճառների փոփոխությամբ (ավելացմամբ): Եթե նախկինում արտագաղթի հիմնական պատճառներն էին լավ աշխատանքի որոնումը, բարեկեցիկ միջավայրում ու պայմաններում ապրելու ձգտումը, ավելի լավ ապագա ունենալու հույսը, ապա 44-օրյա Արցախյան պատերազմից հետո արտագաղթը խրախուսող գործոնների թվին ավելացել են նաև անվտանգային խնդիրները:

- Ինչ վերաբերում է հայրենադարձության խրախուսելուն, ապա ՀՀ կառավարության կողմից նոր թիրախային ծրագրեր չեն մշակվել, մեխանիկորեն շարունակում են իրականացվել միայն նախկինում մշակված և ներկայումս անվանափոխված մի քանի ոչ «հեղափոխական» ծրագրեր:

ԺՈՂՈՎՐԴԱԳՐԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԻ ԵՎ ԱՐՏԱԳԱՂԹԻ ՀՆԱՐԱՎՈՐ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ՀՀ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՎՐԱ

Ժողովրդագրական խնդիրները և արտագաղթը էական բացասական ազդեցություն կարող են ունենալ տնտեսության վրա:

Բնակչության նվազումն անխուսափելիորեն հանգեցնում է աշխատանքի արտադրողականության նվազմանը, քանի որ արտագաղթողների մի զգալի հատված բարձր որակավորում ունի («ուղեղների արտահոսք»), իսկ մյուս կողմից ժողովրդագրական փոսից դուրս գալու հիմնական փոխհատուցման մեխանիզմը՝ միգրանտների հոսքի ավելացումն է, որոնց մեծ մասը չեն ունենում բարձր որակավորում: Այսպես, ՀՀ-ից հիմնականում արտագաղթում են երիտասարդները, հատկապես, Արևմտյան երկրներ օրինական հիմքերով արտագաղթողների մի ստվար հատված երիտասարդ մասնագետներն են: Սա նաև նպաստում է բնակչության «ծերացման» գործընթացին[49]:

Երկրորդ ուղղակի հետևանքը՝ գնումների ակտիվության նվազումն է: Սպառողների թվի անկումը բերում է ներքին պահանջարկի անկմանը տարբեր ոլորտներում՝ սպառողական ապրանքների պահանջարկից մինչև անշարժ գույքի և հիփոթեքային վարկերի պահանջարկը, նվազեցնում է շինարարության և տնտեսության բոլոր հարակից ոլորտների զարգացման տեմպերը:

Հաջորդը աշխատուժի նվազումն է: Հայաստանում արդեն իսկ տարեցտարի նվազում է աշխատունակ տարիքի բնակչությունը: Եթե, օրինակ, 2015թ. տարեսկզբին Հայաստանում առկա էր ավելի քան 2 մլն աշխատունակ տարիքի բնակչություն, ապա 2021թ. այն արդեն շուրջ 1.88 մլն էր:

Վերջապես, պետության տեսակետից, ապագայում վտանգավոր խնդիր է բնակչության ծերացումը, որը արտահայտվում է տնտեսությունում թոշակառուների թվի աճով, հատկապես անաշխատունակ մեծահասակների մասով: Ծերացման պատճառով փոփոխվում է նաև սպառման մոդելը, սպառողական ծախսերը նվազում են, ինչն ազդում է ապրանքների գների մակարդակի վրա: Արժույթի միջազգային հիմնադրամի գնահատականների[50] համաձայն՝ բնակչության ծերացումը ուղեկցվում է դեֆլյացիոն ճնշումներով, քանի որ նվազում է համախառն պահանջարկը: Այս դեպքում դրամավարկային

[49] Ս. Գրիգորյան, Հայաստանից արտագաղթը մեծանում է, բնակչությունը՝ ծերանում, 27 հունվարի 2022թ., https://news.am/arm/news/683945.html (18.02.2022թ.):

[50] Daniel Baksa, Zsuzsa Munkacsi, More Gray, More Volatile? Aging and (Optimal) Monetary Policy, September 20, 2019, https://www.imf.org/en/Publications/WP/Issues/2019/09/20/More-Gray-More-Volatile-Aging-and-Optimal-Monetary-Policy-48532, (18.02.2022թ.):

քաղաքականությունը դառնում է քիչ արդյունավետ, քանի որ տարեցների պահանջարկը այնքան զգայուն չէ տոկոսադրույքի նկատմամբ:

Միաժամանակ, նվազում են խնայողությունները, քանի որ տարեցները ավելի քիչ են խնայում, քան աշխատունակ տարիքի մարդիկ: Այդ երևույթները նկատվում են նաև Հայաստանում: Այսպես, ՀՀ տնտեսությունում համախառն խնայողությունները նվազման միտումներ են դրսևորում: Համախառն խնայողությունները 2017թ. կազմել են 941.1 մլրդ դրամ, 2018թ.՝ 931.0 մլրդ դրամ, իսկ 2019թ.՝ 642.2 մլրդ դրամ[51]:

Ի վերջո՝ ժողովրդագրական ծերացումը լուրջ բեռ է դառնում բյուջեի համար՝ կենսաթոշակները վճարելու տեսակետից: Հայաստանը բնութագրվում է որպես բնակչության ծերացումով երկիր, ինչը բերում է և բերելու է կենսաթոշակառուների քանակի ավելացմանը: Այսպես, օրինակ՝ 2019թ. սկզբին ՀՀ-ում թոշակառուների թվաքանակը շուրջ 464,110 էր, 2020թ.՝ 464,595, իսկ 2021թ. հուլիսի 1-ի դրությամբ՝ 465,955: Սա խնդիր է ինչպես ուղղակի կենսաթոշակ վճարելու, այնպես էլ կենսաթոշակները բարձրացնելու տեսակետից: Այս դեպքում պետության սոցիալական պարտավորությունները ձնագնդի էֆեկտ են ստանում, և հարկերի բարձրացման անհրաժեշտություն է ստեղծվում:

Ամփոփելով կարելի է փաստել, որ բացի ապաբնակեցման վտանգից, ժողովրդագրական խնդիրները և արտագաղթը լուրջ բացասական ազդեցություն կարող են ունենալ տնտեսության վրա: Ազդեցության հիմնական ուղղություններն են՝ աշխատուժի առաջարկի և արտադրողականության նվազումը, համախառն պահանջարկի և խնայողությունների նվազումը, ինչպես նաև բնակչության ծերացման պատճառով կենսաթոշակները վճարելու և/կամ դրանց ավելացման խնդիրները, որոնք կդառնան ծանր բեռ պետական բյուջեի համար և ենթադրաբար կհանգեցնեն պետական պարտքի ավելացմանը և հարկերի բարձրացմանը:

[51] Ցավոք, 2020 և 2021թթ. տվյալները դեռևս հրապարակված չեն, https://armstat.am/file/doc/99526988.pdf

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

«Մինչև 2050 թվականը Հայաստանի բնակչությունը հասցնենք առնվազն 5 միլիոնի»[52]: Ցանկանում ենք ավարտել աշխատանքը ՀՀ նոր կառավարության վերոհիշյալ խոստումը կրկնելով ոչ միայն այն պատճառով, որ խոստումը ինքնին աբսուրդային պոպուլիզմ է (պետք է բոլոր հայաստանցի ընտանիքները հանկարծակի դառնային բազմազավակ՝ որոշ հարևան իսլամական երկրների պես կամ զգալի թվով հայեր Մոսկվայից, Փարիզից և Լոս Անջելեսից պետք է ամեն ինչ թողնեին և վերադառնային «նոր» Հայաստան), այլև այն պատճառով, որ երկրի ժողովրդագրության ուսումնասիրությունը հանգեցրեց հետևյալ տխուր եզրակացություններին.

- Վերջին տարիներին ՀՀ բնակչության թվաքանակը նվազել է և նվազման դադարելու կամ առավել ևս բնակչության աճի միտումներ չեն արձանագրվել: Բնակչության կենտրոնացումը քաղաքներում մեծացել է, իսկ Երևան քաղաքը դարձել է գերկենտրոնացված, այստեղ ապրում է արդեն երկրի բնակչության շուրջ 37%-ը:

- Ծայրահեղ մտահոգիչ զարգացումներ են արձանագրվել Հայաստանի համար հույժ կարևոր սահմանամերձ Տավուշի, Վայոց ձորի, Սյունիքի և Գեղարքունիքի մարզերում: Վերջին տարիներին այս մարզերի բնակչությունը անընդհատ նվազել է՝ առավել բարձր տեմպերի հասնելով 2020-2021թթ.:

- ՀՀ գյուղական բնակչությունը շարունակել է նվազել ՀՀ բոլոր մարզերում, բացառությամբ Արմավիրի մարզի:

- Էականորեն նվազել են ծնունդները. ծնելիության գործակիցը իշխանափոխությունից հետո տատանվում է նախորդ տասնամյակների համեմատ ամենացածր միջակայքում:

- Կտրուկ աճել է մահացությունը. 2020 և 2021թթ. գրանցվել են մահացության ռեկորդային գործակիցներ: Այդպիսի ցուցանիշներ չեն արձանագրվել ո՛չ 1988թ. Սպիտակի երկրաշարժի տարում, ո՛չ էլ առաջին Արցախյան պատերազմի տարիներին: Հատկանշական է, որ աճել է նաև ինքնասպանությունների և ամուսնալուծությունների թվաքանակը, իսկ ամուսնություններինը հիմնականում նվազել է:

---

[52] Հայաստանի վերափոխման ռազմավարություն 2050, https://www.primeminister.am/u_files/file/Haytararutyunner/Armenia2050_7_5.pdf

- Արդյունքում, կտրուկ նվազել է բնական աճը, 2020 և 2021թթ. գրանցվել է աննախադեպ ցածր ցուցանիշ՝ համապատասխանաբար 183 և 1927 մարդ :

- Խորացել է ժողովրդագրական ծերացման գործընթացը՝ աշխատունակ տարիքի բնակչության թվաքանակը իշխանափոխությունից հետո զգալիորեն նվազել է, ինչը բացասաբար կազդի նաև ՀՀ տնտեսական ներուժի վրա:

- ՀՀ կառավարությունը ժողովրդագրական իրավիճակը շտկելու համար համապատասխան ջանքեր չի գործադրել, բացառությամբ նոր ծնված երեխաների համար որոշ նպաստների ավելացումը:

- Ինչ վերաբերում է արտագաղթի տեմպերին, ապա 2018-2020թթ. արձանագրվել է սահմանահատումների դրական հաշվեկշիռ: 2020թ. դրական հաշվեկշիռը ամբողջությամբ պայմանավորված է եղել ԿՈՎԻԴ-19-ի համավարակի սահմանափակումներով: Իսկ արդեն 2021թ. արձանագրվել է էական բացասական հաշվեկշիռ: Ի դեպ, Հայաստանի Հանրապետության փաստաթղթերով սահմանահատումների բացասական հաշվեկշիռը ավելի մեծ է: Միաժամանակ, մշտական բնակության նպատակով արտագաղթողների հոսքը սառեցված է՝ պայմանավորված արտաքին գործոններով: Արտագաղթի տեմպերը ավելի մեծ կլինեին, եթե չլինեին ԿՈՎԻԴ-19-ով պայմանավորված՝ մարդկանց տեղաշարժի սահմնափակումները:

- Միգրացիայի մնացորդի ցուցանիշի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ վերջին տարիներին այն շարունակել է մնալ բացասական, դրական է եղել միայն 2020թ., իսկ արդեն 2021թ. արդյունքներով միգրացիայի մնացորդը կրկին բացասական է: Ե՛վ սահմանահատումների, և՛ միգրացիայի մնացորդի տվյալները ցույց են տալիս, որ արտագաղթի հետ կապված իրավիճակը ավելի է սրվել:

- ՀՀ բնակչության արտագաղթի հիմնական ուղղություններից է Ռուսաստանի Դաշնությունը: Իշխանափոխությունից հետո Հայաստանից ՌԴ արտագաղթողների թիվը ռեկորդային ցուցանիշներ է գրանցել՝ և՛ կացության իրավունք, և՛ քաղաքացիություն ստանալու կտրվածքով: 2018-2021թթ. ՌԴ քաղաքացիություն է ստացել ավելի շատ հայաստանցի, քան նախորդ տասնամյակի ընթացքում:

- Բացասական տեղաշարժեր են արձանագրվել նաև արտագաղթը խթանող պատճառների մեջ: Եթե նախկինում արտագաղթի հիմնական պատճառներն էին լավ աշխատանքի որոնումը, բարեկեցիկ միջավայրում

ապրելու ձգտումը, ավելի լավ ապագա ունենալու հույսը, ապա 44-օրյա Արցախյան պատերազմից հետո արտագաղթի պատճառների թվին ավելացել են նաև անվտանգային խնդիրները:

- Արտագաղթը և ժողովրդագրական խնդիրները էական բացասական ազդեցություն կարող են ունենալ տնտեսության վրա: Ազդեցության հիմնական ուղղություններից են աշխատուժի արտադրողականության, համախառն պահանջարկի և խնայողությունների նվազումը, ինչպես նաև բնակչության ծերացման պատճառով կենսաթոշակառուների մասնաբաժնի ավելացումը:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ կարելի է փաստել, որ ժողովրդագրական իրավիճակը շտկելու, բնակչության թվաքանակը մեծացնելու, արտագաղթը կանխելու, ինչպես նաև արտագաղթած հայրենակիցների ներգաղթը ապահովելու ՀՀ կառավարության շռայլ խոստումները ի սկզբանե չունեին բավարար հիմք և չեն իրականացվել: Ավելին, երկրի անվտանգության ապահովման, զարգացմանն ուղղված խելացի և համակարգված քաղաքականությունների մշակման և իրականացման բացակայությունը երկիրը կանգնեցրել է դեմոգրաֆիական վիճակի խիստ մտահոգիչ պատկերի առջև:

«ԼՈՒՅՍ հիմնադրամ» գրառմամբ հրապարակված նյութը պաշտպանված է ՀՀ օրենսդրությամբ և միջազգային համաձայնագրերով: Հրապարակված նյութի բոլոր իրավունքների բացառիկ իրավատերը «ԼՈՒՅՍ» հիմնադրամն է:

*Նյութի ամբողջական կամ դրանից **քաղվածքների** վերարտադրումը թույլատրվում է իրականացնել միայն «ԼՈՒՅՍ հիմնադրամ» գրառման և համապատասխան ակտիվ հղման տեղադրման պայմանով՝ պահպանելով «ԼՈՒՅՍ» հիմնադրամին պատկանող նյութերի օգտագործման կարգը:*